ՄԱՐԻԱՄ ՇՈԼԻՆՅԱՆ

ԻՆՔՆԱՐԱՐՈՒՄՆ ԻԲՐԵՎ ՈՒՂԻ, ՃԱՆԱՊԱՐՀ ԻՆՏՐԱՅԻ «ՆԵՐԱՇԽԱՐՀ»-ՈՒՄ

Ինտրայի «Ներաշխարհը» (1906) ընթերցողին Արիադնեի թել է տալիս՝ մտնելու հոգու լաբիրինթոս: «Ներաշխարհի» վերաբերյալ Ստ. Թոփչյանը նկատել է. «Եթե փորձենք սահմանել ժանրը, ապա կստացվի՝ փիլիսոփայական–լիրիկական արձակ պոեմ»[1]: Պետք է մի փոքր ուղղում մտցնել. «Ներաշխարհը» ոչ թե «փիլիսոփայական–լիրիկական արձակ պոեմ» է, այլ՝ լիրիկական-փիլիսոփայական, քանի որ այստեղ համակարգված չէ որևէ փիլիսոփայական տեսություն: Փիլիսոփայությունն Ինտրայի ներաշխարհի հենքի թելերի ամբողջությունն է, որի լիրիկական գունավորմամբ ընթերցողին է մատուցվում հոգու շերտերի ինքնազննումը, ես ելակետից Անսահմանություն վերջնակետի միտվածությունը: ***«Ներաշխարհը» կյանքի և մահվան հակադրամիասնության երգ է, մահվան ցավից պատրանք-երազանքներում սփոփվելու, սիրո մեջ մոռացում փնտրելու երգ, բանական մարդու՝ homo sapiens-ի ներաշխարհի էսսե՝ Ecce Homo: «Ներաշխարհը» լիրիկական-փիլիսոփայական էսսե է:***

Այն բացվում է բանական մարդու՝ մտածող մարդու ինքնազննման նախապատրաստությամբ: «Ներաշխարհի» առաջին իսկ էջերից սկսում է ձևավորվել Ինտրա-գրողի կերպարը: Նրա ես–ի բացահայտմամբ աստիճանաբար կազմավորվում է մարդու հատուկ մի տեսակի բնութագիրը: Ո՞վ է մարդու այդ տիպը, ի՞նչն է բնորոշ այդպիսիներին:

Նախ՝ նրանք անհատականություններ են՝ «հասարակ կենցաղեն տառապող», դրանից բարձր կանգնած: Նրանք մեծ երազողներն են և մեծ տառապողները, նրանք ցավից գերհասունացողներն են: Հայտնի է, որ մարդը՝ որպես կենսաբանական տեսակ, չի առաջադիմում. նա հավերժորեն նույնն է: Քաղաքակրթությունների հերթափոխերում միշտ էլ եղել են մարդ-տեսակի բացառություններ՝ բարձրագույն տիպի էություններ, որոնք ծնունդ են տվել արվեստի, գիտության, սակայն բարձրագույն տիպը կենսաբանական տեսակ չի դարձել առ այսօր[2]: Հակադրվելով դարվինիզմին՝ այս երևույթի մասին հանգամանալից խոսվում է նաև Ֆ. Նիցշեի «Կամք առ իշխանություն» աշխատության մեջ[3]: Խոսքը անհատականության, ինդիվիդումի մասին է, որին միշտ հակադրված է իր ժամանակի «ամբոխը»: «Ներաշխարհում» Ինտրան այն կարծիքին է, թե մարդու բարձրագույն այդ տիպը կարծես տեսակի է վերածվում՝ նկատի ունենալով այդպիսի անհատականությունների «շարանը»՝ դարերի կտրվածքով. «...կարծես *տեսակացող* անհատին կյանքի եղանակն է առանձնությունը»[4]: Խոսքը ինտրովերտ խառնվածքի մասին է, որը բնածին ներհայաց է, ինքնազն-

նող, հակված առանձնության, մենության: Սա նույն անհատն է, որի մասին Չարենցը խոսում է՝ որպես հզոր կաղնու՝ շրջապատված մացառներով: Սա նույն անհատն է, որի կերպարը խոր արմատներ ունի համաշխարհային գրականության մեջ՝ հնդկական ուպանիշադների ներհայեցող որոնող, Պյութագորի առասպելական կերպար, իրանական Ավեստայի ավետաբեր Զարդուշտ-Զրադաշտ, Քրիստոս, Բուդդա, անտիկ և միջնադարյան միստիկներ... Իսկ նորօրյա կտրվածքով՝ դրանք այն անհատականություններն են, ովքեր արարում են արվեստ, մշակույթ...

Ինտրայի «Ներաշխարհի» հերոսը՝ բացառիկ հոգին, գիշերվա անեզրության մեջ ներանձնանում է՝ խորհելու Անսահմանի, «արտաշխարհի», «գերաշխարհի» մասին, որի մասնիկն է իր իսկ հոգին: Ինտրան մեջբերում է Նիցշեից, թե այդ հոգիները «ուժերու կուտակում մ'են» (էջ 58): Նրանք ձգտում են առանձնության, ուր պահպանվում է նրանց եզակիությունը, հոգու ներդաշնակությունը, ուր հզոր կենտրոնացմամբ դառնում են ամենաարտադրողական, ամենաբեղմնավոր անձինք: Ինքնապատերազմող հոգու ներքին տառապանքով նրանք «ծնում» են լույս: Նման անհատականությունների մասին Նիցշեն գրում է. «Ո՞վ կհամարձակվի նայել հոգեկան դառն ու սարսափելի տառապանքների անապատը, ուր ընկղմվել են բոլոր ժամանակների ամենաբեղմնավոր մարդիկ»[5]: Ի թիվս այլոց՝ Ինտրան թվարկում է նման բացառիկ անձանց, ովքեր դարերի պատմությունից հառնում են իրենց՝ մենակյացի ճգնարաններից՝ «Սաքիամունիին անապատականությանը. Մովսեսին լեռնակեցության մեջ. Մեռյալ Ծովուն եզերքներուն վրա թառած Եսսենյանց առաքինի նախաքրիստոնեության մեջ. անընմբռնելի մեկուսացումներուն մեջ...» (էջ 58) և ավելացնում, թե առանձնության մեջ այդպիսի անհատների գերհասունացումն այլ բան չէ, քան «զարգացումը մարդու բոլոր կարելիությանց» (էջ 59): «Ներաշխարհն իր հեղինակեն դիտված» հոդվածում Ինտրան ինքն իր մասին գրում է. «...Ինտրա բոլորովին դեմհանդիմանական (intuitif) իմացականություն մ'է» (էջ 329). բազմակողմանի զարգացած այս անհատականությունը, որն օժտված էր երկնատուր շնորհով, պատկանում էր ինտրովերտ–ինտուիտիվ խառնվածքի, որի մասին ինքն էլ էր տեղյակ: Իսկ սա մարդու այն առանձնահատուկ տիպն է, որոնք վերուստ մարգարեներ են ծնվում[6]: Իզուր չեն Ինտրայի և Նարեկացու միջև աղերսներ տեսել:

Ներքնատեսությամբ, ինտուիցիայով Ինտրան ճիշտ է կռահում առանձնության բերած հետևանքները ինտրովերտ-ինտուիտիվ խառնվածքի դեպքում: Նա ցույց է տալիս ինչ-որ բուն երևույթի հետևանքը. առանձնացումը բերում է հոգևոր ահռելի հասունացում՝ հոգեբանական «բարձր լեռներ», որի կատարից նման անձինք ի վիճակի են հանգելու բարձրագույն բարոյականության՝ բարու և չարի նոր ըմբռնման պահանջի:

Այս հետևանքները կարողությունների խտացման մի մասն են կազմում միայն, իսկ հոգևոր նման *գերհասունացման պատճառը սուբլիմացիան է*. այսինքն՝ առանձնացումը՝ ճգնակեցությունը՝ մենակեցությունը, հանգեցնում է սուբլիմացիայի[7]: Ահա այսպիսի ներանձնացման մասին է խոսում Ինտրան «Ներաշխարհի» առաջին գլխում («Ներաշխարհը» գլուխների բաժանված չէ, բայց ուշադիր ընթերցողը կնկատի, որ գիրքը բաղկացած է ութ գլխից, որոնք իրենց հերթին կազմված են մանր հատվածներից) և երազում նման առանձնացման հնարավորություն. «Ո՞վ պիտի տար ինձի, բաբե՛, խրճիթ մը, Սև Ծովուն մեկ վայրենի ափունքին վրա մեկ խրճիթ մը, ուր ես բնակեի, ուր խիղճս բնակեր...» (էջ 59): Ուշադրություն դարձնենք մի հանգամանքի վրա. ինքնազննման, ներանձնացման, մենակեցության կամ ճգնակեցության ֆենոմենը, որ գալիս է դարերի խորքից՝ իբրև կրոնական երևույթ, զանազան դիվերգենցիաներով (ճյուղավորում) այնքան հաճախ է դրսևորվում 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի եվրոպական, նաև հայ գրականության մեջ: Մի՞թե նույն երևույթը չէ և՛ «հոգու աշտարակում» փակվելը, և՛ «գրքերի մեջ» նետվելու հոգեբանությունը, և «փախուստը» դեպի «բարձր լեռներ»:

Հայ գրականության մեջ «ստեղված» օրվա պահեր խորհրդանշող սիմվոլները, դիոնիսյան և ապոլոնյան նախասկիզբը, «հեթանոսականությունը» և այլն, և այլն և հատկապես «ճգնակեցության», «ինքնասուզումի» «վարակի» աղբյուրը սիմվոլիզմն է, որը հագեցած էր «կյանքի փիլիսոփայությամբ»: Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» այլաբանական աշխատության գլխավոր հերոսը՝ իմաստուն մենակյացը, որ հաճախ է «մենություն քաշվում» և «հոգու ամենալուռ ժամ» ունենում, շատերի, նաև Ինտրայի «Ներաշխարհի» հերոսի հոգու երկվորյակն է: «Ներաշխարհի» առաջին գլխում Ինտրայի հերոսը, ինչպես արդեն նշեցինք, երազում է առանձնություն՝ Սև ծովի ափին և զանազան հարցեր է շոշափում, որոնք ուղիղ կամ անուղղակի առնչվում են մենակյացության, առանձնության ֆենոմենին:

Առանձնանալու, մենանալու բնատուր հակվածությամբ հոգին՝ խորհող, բանական ես-ը, որ միտում է իր ինքնության և Տիեզերքի անսահմանության հետ առնչության բացահայտման, կարող է գրել. «Սև Ծովուն աղի հոծությունն իմ գերաճումս տրամադրեց: Կյանքը, զոր հուզվեցա այն օրերեն ի վեր՝ բխեցավ այն Ծովուն մռայլեն և այն աղջկանը լույսեն» (էջ 54): Պետք է եզրակացնել, թե ես-ի գերաճը, ըստ Ինտրայի, ևս պայմանավորվում է ցավով և սիրով: «Ներաշխարհի» առաջին գլուխը առ կինը՝ Իռենան, եթերային, ավելի հոգևոր, քան մարմնական սիրո փառաբանում է՝ նաև՝ սիրո բարձրագույն դրսևորում՝ սեր առ Անեզրը, սեր առ Լույսը, սեր առ Աստված: «Ներաշխարհի» ես-ը ևս այն խառնվածքներից է, ում կյանքում սերն իր ուժգնությամբ համազոր է մահվան: Եթե կա այդ սերը, կյանքն իմաստավորված է, իսկ եթե չկա, կյանքը վերածվում է մեծագույն

անիմաստության, անհեթեթության, ողբերգության: Այդ ես-ը մարդու՝ խոր սիրող և տառապող տեսակն է: Ներհայեցող էությամբ նա ներըմբռնում է, որ ինքը ևս այն միստիկներից է, որոնք մարդկության դարավոր պատմության երկնակամարում ժամանակ առ ժամանակ փայլել են որպես վառ ու պայծառ մենավոր աստղ և լուծվել, միահյուսվել Տիեզերքին: Բայց այդ բացառիկ հոգիները ևս, իբրև սովորական մի մահկանացու, կաղապարված, բանտված են մարդկային մսեղեն ձևի մեջ, իսկ հոգին սիրելու անսահման կարոտ ունի. «Ու՞ր ես, Իռե՛նա» (էջ 38): Քանզի կա՛ Իռենան: Քանզի անսահման զգացում կա նրա հանդեպ: «Ներաշխարհի» հերոսն իր հոգում նրան օծել է ամենահրաշալի, ամենալուսավոր երանգներով: Գուցե հնարել է հենց տերյանական այն սուտը, որի թմբիրում օրորվում է սիրող հոգին:

Այդպիսի հոգիները երկնում են երազանքներ, որոնցով իմաստավորվում է կյանքը: Երազանքը բնորոշ է «ուժգին ինքնությանը», որը չի կարող համակերպվել իրականության հետ, և ինքն է բերում նոր օրենքներ, նոր բարոյականություն: Սև ծովի (կյանքի սիմվոլը) մռայլից է բխում երազանքը, որի բարձրակետն է սերը: Սև ծովի սարսռազդու նկարագրից բխում է մարդկային կյանքի կառքի «սարսափահար թավալումը» դեպի երազանք և սեր: Ու՞ր փախչել իրականության ցավից: Ինչպիսի՞ն պիտի լինի այն իրականությունը, որտեղ նորմալ հարաբերություններ կկարգավորվեն: «Ներաշխարհի» ես–ը՝ իբրև ներանձնացող իմաստուն, հանրության, հասարակության ներսում գործող իրավունքն ու պարտականությունն ընկալում է այսպես. «Իմ տանջանքս է ընկերությունը, ցորչափ ստորացնող զիջողություններ կենթադրե,- իրավունքներու խոլ վաճառումներ՝ ապուշ պարտականությանց փոխարեն <...> Ավելի կամ նվազ կորսված անձնականություն մ'է ամեն անհատ» (էջ 55), որը հիշեցնում է Նիցշեի միտքը. «Մեր պարտականությունները՝ ուրիշների իրավունքը մեզ վրա»[8]: Նիցշեն առանձնացնում է միայնության հակում ունեցող օրենսդիրներին մաստաներից, ամբոխից, քանզի ամբոխը իշխող դասի ձեռքին դառնում է «ամենօրյա գործածության առարկա»[9]: «Ներաշխարհի» առաջին գլխում ես-ը գլոբալ մտածողությամբ ինքնազննումից Անեզրության միտող մենության հակված այն անհատն է, որը քաղաքակրթությունների զարգացմանը զուգահեռ ներփակ է դառնում՝ առանձնության մեջ գտնելով ներքին ազատություն: Չմոռանանք, որ նրանք բերում են բարու և չարի նոր ըմբռնում՝ լինելով օրենսդիրներ: Հետևապես՝ պետք է ենթադրել, որ «Ներաշխարհի» հաջորդ էջերում ներհայեցող իմաստուն–խենթը պետք է փրկության ուղի, դուռ, ճանապարհ, ելք «երկնի»:

«Ներաշխարհի» *երկրորդ* գլխում տրամադրությունը կտրուկ փոխվում է: Եթե առաջինում էական էին Սև ծովը, պատուհանից երևացող նոճիները, որոնք երկրայինից երկնայինին փոխանցումն իրականացնող

սիմվոլներ էին, ապա երկրորդ գլխում նոր սիմվոլ է հայտնվում՝ *անձրևը*, որը խորհրդանշում է անձրև-հոգեվիճակը: Միապաղաղ անձրևը զուգորդվում է վշտերի համր ու լռին լացի, անհուն թախծի, արթնացած ցավերի, սպասվող մահվան հետ. այս ամենը կարծես քխում է «աշխարհքին վրա իջած ըլլա մռայլամած ճշմարտութենե մը» (էջ 60): «Ներաշխարհի» երկրորդ գլխի առաջին մասում ներհայեցող հոգին բզկտվում է կասկածից, երկփեղկվում: Երկփեղկումը, ներքին ինքնապատերազմը կամ, ինչպես Ինտրան է բնորոշում, «անվանելի ինքներկբայումը» հետևանք է *իմացության, խոր իմացության*, որի մեկ այլ սիմվոլ-խորհրդանիշն էլ «քարձր լեռներն» են: Այսինքն՝ իմացությունը հանգեցնում է կասկածի, տառապանքի... Նույն՝ Ժողովողի իմաստնությունը... Ըստ Ինտրայի՝ այս հոգեբանությունն առաջ է գալիս գծուծ առօրյայից, ուր շուրջը միայն անժպիտ, առանց երկինք հոգիներ են, աներազ հոգիներ, թշվառություն: Ամենուր գոյության կռիվ է, ըստ Ինտրայի՝ «կենսապայքար»: Ապրողները՝ կարճ մտածողությամբ, «դրապաշտ կենսագրավման մը» գաղափարով են տոգորված: Նրանք չեն գիտակցում ամենաահավորը. անջրպետից բոլորին է նայում «նողկալի, ահաբեկիչ մահկանացիությունը»: Իրականությունը սոսկ թվացյալություն է, կեղծիք, շուրջը՝ միայն սուտ, ծանծաղություն, հիվանդագին անշարժություն, «քարձր լեռներից» անկում դեպի քաղաքների խեղդող, հեղձուցիչ օդը: Ահա ևս մի հարց. համատարած հակասականության և կեղծիքի մեջ քարոզվում է հավասարություն: Բայց սա ինդիվիդումի, անհատականության մահ է, «ամբոխի», «հոտային բնազդների» գերիշխանություն: «Կենսապայքար»-գոյության կռիվն ապանում է ներքին ազատությունը: Նման հասարակական պայմաններում է, ըստ Ինտրայի, ծնվում հոռետեսությունը: Եթե հասարակական հարաբերությունները կարգավորվեին, չէին լինի մեծ հոռետեսները: Շոպենհաուերյան նման հոռետեսությունից քխում է «ամեն բանի վիշտը». «...ընդհանուր վիշտ մը կզգամ՝ *ամեն բանի վիշտը*» (էջ 64):

Քանի որ «անձրևի մոխրագույն ստվերն» է իջել ամենուր՝ շուրջը լցնելով տիեզերական վիշտ (այս պատկերավորությունն ընկալենք փոխաբերաբար՝ վերագրելով ներաշխարհին՝ մարդկային հոգուն), Ինտրան առաջադրում է նոր բարոյականություն՝ բարու և չարի նոր ըմբռնում, որը հնարավորություն կընձեռի դուրս գալ անհույս հոռետեսությունից և մահվանը փարելու երազանքից: Մարդը պետք է բնության դեմ պայքարի, այնինչ «անդուլ կռիվը... կզինվի մարդկային անհատներու, խումբերու միջև» (էջ 68), այնինչ կեղծ, ցուցադրական քարոզվում են սիրո գաղափարներ. կենսապայքարը մարդկանց միջև մարդկության խայտառակությունն է, մրցում պետք է ծավալվի «անհատականության ամենամեծ գործնականացման» համար, այնինչ համատարած «աճում» են միմյանց պատճենահանող, կրկնող արարածներ: Անհատի բարոյական կատարելության

ձգտումը նեղ, սահմանափակ խնդիր չէ, «անհատական բարոյականը» նույն «հավաքական բարոյականն» է, հետևաբար ամեն բան պետք է սկսել մարդկային հոգուց՝ մեծ վերափոխություններ կատարելով այնտեղ:

Ներաշխարհի» երկրորդ գլխում հոռետեսությունը հանգեցնում է մահվան երազանքի, սակայն ներքին ես-ը կտրուկ ըմբոստանում է՝ ցավից վերածնվելով և վերադառնալով իրականություն՝ հարություն առնելով և բերելով «զուռ», «ուղի», «լույս»: Երկրորդ գլխի երկրորդ մասը լույսի, սիրո, Անեզրի, Տիեզերքի փառաբանություն է: «Ինչպե՞ս ամեն բան գեղեցիկ է տառապանքեն ետքը» (էջ 73): Ինտրայի «Ներաշխարհում» ծավալվում է ոսկի հեքիաթ, որի առանցքը դառնում է ոգեղեն սերն առ Իրենցան, առ բնությունը, առ Անեզրը՝ տիեզերականը:

Վեդայական տիեզերակսն ցնծությունը՝ լույսի, բույրերի, գույների, բարության, երջանկության ծփանքը շարունակվում է ծավալվել նաև Ինտրայի «Ներաշխարհի» հաջորդ՝ *երրորդ* գլխում, ուր այժմ երջանկությունն ընտրում է արբշիռ ցնծության նոր տարածք՝ գինետուն, որտեղ բաժակի «ալբոլեն բռնկած» «լույսերը կծփծփան»: Ներաշխարհում դիոնիսյան անզուսպ ցնծություն է, հանդայքի զագաթնակետ, երբ... հոգին լուծվում է Անհունի անեզրության մեջ. «...միթե Անհունը չէ՞ այն անպատում ու նշուղող համադրույթը, որում կտարվիմ էությանս» (էջ 89), երբ հոգին անցնում է իր էության սահմանները՝ խառնվելով Հավերժությանը:

Ինտրայի «Ներաշխարհի» ես-ը նա ապրում է տիեզերական ցնծություն, հեթանոսապաշտ հոգեբանությամբ՝ մարդ-աստված միության ներդաշնակության հրճվանք, նա նա թագորյան բնապաշտությամբ սեփական երակներում զգում է տիեզերքի հավերժական տրոփը, օվկիանի շնչառությունը, ծառ ու ծաղկի զվարթ աղմուկը: «Ներաշխարհում» այս ամենը՝ հոգու հրճվանքի տիեզերական ծփանքը՝ մարդու հոգում դիոնիսյան միտվածությամբ կիսաքմբիրի, վեդայական իմաստնության թագորյան վերամաստավորման՝ «ջիրոն-դեբուտի» թե հայ հեթանոսապաշտ արիական կենցության արյան կանչի հաղթանակը, ոչ այլ ինչ է, եթե ոչ «քարձր լեռների» հոգեբանությանը հասածի փախուստ իրականության ցավից, մահվան գիտակցումից դեպի երազանք-պատրանք, դեպի հոգու խաղաղություն և անդորր: Սակայն ներքին ես-ը նորից սթափ նայում է իր շուրջն ու գինետան մի անկյունում «քացահայտում» մի ծերունի, որ խոսում էր «Ներաշխարհի» հերոսի մեռած հոր մասին՝ ավելացնելով. «Լույսերու մեջ պառկի» (էջ 93): Բնապաշտ, հավերժապաշտ, տիեզերապաշտ ես-ը ալեկոծվում է... նախանձից, քանզի այս մարդը բախտավոր է անգիտակից հավատով, «այս մարդը գերեզմանին դանդիոը կմոռնա՝ լուսեղեն ցնորքներու մեջ... Անդրագույն երանությունը կրնա՞ լույսը ըլլալ ուրեմն...» (էջ 93): Եվ տառապանքը, որ ծնվում է մարդու անցողիկության գիտակցումից, մահվան սթափ ներկայությունից, պիտի խեղդվի նորից: Եթե մինչ այս էջերն այն

մոռացության էր տրվում տիեզերական լույսի, հրճվանքի ծփանքում, այժմ մոռացության է տրվում գինու բաժակում: Գինով արբենալը դառնում է ելակետ, որտեղից գինովցած հոգին նորից համայնական, տիեզերական ես–ի մեջ մարդու ինքնության ազատությունն է գտնում:

Այսինքն՝ հավերժական վերադարձի փիլիսոփայական պտույտը գործում է նաև մարդկային հոգում: «Ներաշխարհի»՝ մինչ այժմ քննված հատվածները թույլ են տալիս եզրահանգելու, որ Ինտրայի «Ներաշխարհի» ես–ը ապոլոնյան և դիոնիսյան նախասկիզբների միասնությունն է. ներքին ինքնազննումից, ինքնապատերազմից մեռնելով և հարություն առնելով՝ այդ հոգին լցվում է ապոլոնյան լուսափայլ ինքնախաբկանք-պատրանքով, երազով, իսկ մարմինն արբեցնելով «ալքոլով»՝ թմբիրի մեջ ծուլվում է տիեզերքին, բնությանը՝ որպես հավերժության մի հյուլե:

Չորրորդ գլխում բացահայտվում է ես–ի աստվածային մաքրության և տիեզերական հյուլեայնության գաղտնիքը: Մաքուր, լուսավոր ես–ը չի ապականվում իրերի աշխարհի արտացոլք պատկերներից: Նման հոգիները դրանով իսկ տիեզերական Հավերժի նույնությունն են կազմում: Հենց այս հյուլեն էր՝ որպես երկրի վրա մարմնավորված մի մասնիկ, փառաբանում իր էության անսահմանությունը: Սրանով է Ինտրան բացատրում «աստվածների» միակությունն ու նույնականությունը՝ միաստվածությունը (ինչ էլ կոչվեն դրանք՝ Զևս, Օսիրիս, Բրահման...), իսկ ներանձնանալու հակում ունեցող, աշխարհիկն իր ներսում չարժեորող հոգին հենց Անսահմանի մասնիկն է: Ինտրան բացառիկ եզրահանգման է գալիս. նա փորձում է տալ հավատքի անհրաժեշտության գիտական բացատրությունը՝ ձևակերպելով այսպես. «Ա՜հ, կրոնքներուն նպատակն է, քրիստոնեության նպատակն է ընդհանրացնել զմարդ» (էջ 102): Մարդու ես-ը ձևավորված չէ, ինքնագիտակցմամբ մարդը ձգտում է ինքնահեղկման, ինքնավերահսկման, ինքնակատարելագործման: «Ներաշխարհի» *հինգերորդ գլուխն* սկսվում է նիցշեական «Մանուկ է դարձել Զրադաշտը» տողում ամփոփված հոգեբանության վերլուծությամբ:

Մանկական տարիքում շաբաթ երեկոները եկեղեցի գնալու և վաղվան՝ Կիրակիին՝ որպես տոն, տերունական օր, նախապատրաստվելը հոգեբանորեն բացատրվում է հասուն մարդու հետադարձ հայացքով՝ զարթնածի արժևորումով: Ծերությունը հակված է հոգեբանական ռեգրեսիայի՝ բարու և չարի իմացության բարձունքից հետ մղվելով դեպի սկիզբ՝ մանկություն՝ դրանով իսկ փարելով պատրանք-երազանքի: Ինտրան խոսում է երանության երկու վիճակի մասին՝ մանկան ազատության և ծեր մարդու հոգու խաղաղության, բայց ընդգծում է, թե ինքը «շատոնց կորսնցուցած» է իր ազատությունը, նաև հեռու է «խաղաղութենեն»: Այնուհետև պարզում է ասելիքը՝ բնութագրելով սեփական ներաշխարհը: Նա նշում է, որ դեռևս - հասուն տարիքում չէ (չմոռանանք, որ «Ներաշխարհը» գրվել է մոտավո-

բապես քսան տարեկանում), բայց ներսն էլ մանկան անմեղություն չկա: Այնքան է հասուն, որ փորձում է արգելել ապականված արտաշխարհի («ներաշխարհի» հականիշ իմաստով) մուտքն իր հոգի, որ հոգին չաղտոտվի, բայց և դեռ մեղավոր աշխարհն ու մարդուն ներելու և սիրելու չափ վճիտ չէ այդ հոգին: «Ներաշխարհի» հինգերորդ գլուխը, բացառիկ հոգեբանական խորություն ունի. նախորդ շարադրանքն ասես սրա նախապատրաստությունն էր, որում ամփոփվում է «Ներաշխարհի» բուն ասելիքը՝ մարմնականից անցում հոգևորին, սեփական հոգու բաղադրությունը գիտակցելով ինքնագիտակցմամբ և հզոր ինքնակառավարմամբ հանգում Քրիստոսին՝ Փրկչին՝ հավիտենական Լույսին: Ողջ հինգերորդ գլուխը «գիտակցության, ինքնաճանաչման զարհուրելի ու մահացու աճումով մը» (էջ 134) եկեղեցու ներսում թևածող աղոթքների ընկալում-վերլուծություն է, անգիտակից-անմեղ միամտությունից՝ կրոնական դիտանկյունից «երախա» հոգեբանական վիճակից, հոգևոր հասունացման՝ հոգու ավազանում *մկրտության* հասնելու պատմություն: Այսպես է մարդը մկրտվում Քրիստոսով, այսպես է մարդը վերածնվում, լցվում նոր լույսով: Ինքնըստինքյան հասկանալի է դառնում նաև եկեղեցում թաղի արբեցող ծերունիներից մեկի հայացքում մեռած հարազատ հորը «հայտնաբերելը»: Հուշերը հետ են տանում. կենդանության օրոք հայրը չէր հանդիմանում, նայում էր լուռ, և դա ավելի ծանր էր: Իր սիրով տիեզերքը ողողած Աստված էլ նույն բարեգութ հայրն է, և աղոթքի բառերը՝ «Հայր գթած», նոր իմաստ են ձեռք բերում: «Ներաշխարհում» զուգորդումները վեր են հանում զանազան հոգեբանական իրավիճակներ, կատարվում են նոր բացահայտումներ: Իր թելադրանքով, պարտադրանքով Հայրն ինքը Օրենքն է. նա որդու մեջ սրբագրում է ինքն իրեն: Որդին հոր վերածնունդն է: Իրականության անհեթեթության ֆոնին էլ ավելի են արժևորվում աղոթքը, եկեղեցին՝ «թերևս ճշմարիտ բաները»: Գերիմաստնացած հոգին շարունակ կասկածանքի մեջ է. ուրեմն աղոթքն ու եկեղեցին ևս «թերևս ճշմարիտ բաներ» են. ճշմարտության փնտրտուքում տիեզերական անգոյության, անէության փառաբանումը ևս ցնորք ու պատրանք է՝ հոգու ցավը մեղմող ինքնօրորում՝ ի հեճուկս ամեն անկյունից նայող մահվան: Եվ ահա ես-ը նորից իր խցում է, իսկ սեղանի ծաղկամանից նրան է նայում թունավոր բույս բանգը՝ մահվան խորհրդանիշ ծաղիկը: Նորից մարդկային ներաշխարհի երկփեղկում, տառապանք, նորից՝ կողք կողքի կյանքը և մահը, մահը և սերը, պատրանք - երազանքը և մահը:

Կարծես «Ներաշխարհի» ես-ը կրկին ապրեց մահվան սթափ ներկայությունը: Հինգերորդ գլուխն ավարտվում է նոճիներին ուղղված ձոնով, նոճիներ, որոնք այս անգամ դառնում են ինքնասուզվող ներհայեցողի՝ դեպի խաղաղվածությունը հոգու վերպացման խորհրդանիշ: Այն դառնում է մահկանացության՝ դեպի «զուսանյութ Հավերժությունն» ունեցած ձգտման

խորհրդանիշ: Իբրև մեռած և վերածնված էակներ՝ նոճիները գիտեն Հանգստի աստղալի խաղաղությունը, որին մարդը հասնում է իր էության նյութը լուծելով տարածական նյութի մեջ: Ի դեպ՝ նոճին՝ կիպարիսը, որն այնուհետև գլխավոր սիմվոլ է դառնալու նաև Ինտրայի «Նոճաստան» ժողովածուում, հեղինակի կողմից պատահական չի ընտրված: Այն Սիդ եզերքի սրբազան ծառն է[10], որն իր պլացքով դեպի երկնի անհունը հենց խորհրդանշում է երկրայինի և երկնայինի կապը, երկրային գոյությունից հոգու փոխանցումը անտեսանելի ոլորտ: Ե՛վ «Ներաշխարհում», և՛ «Նոճաստանում» մահվան գաղափարը հանգիստ չի տալիս ներքին ես–ին: Իմաստուն հոգին որոնում է կյանքի իմաստը, մահվան խորհուրդը, փորձում ըմբռնել դրանք:

«Ներաշխարհի» *վեցերորդ գլխում* բանգ - մահը լայնորեն տարածում է թևերը՝ շուրջը սփռելով իր սառը ներկայությունը: Այդ սառը շնչից ես-ի ներաշխարհում զուգորդումներ են արթնանում՝ Եգիպտոս, բուրգերի հովիտ... Ինչպես բանգը, բուրգերը և Սֆինքսը ևս դառնում են մահվան խորհրդանիշ:

Ինքնասուզման հակված ես-ը ձգտում է հասկանալ բուրգերի, Սֆինքսի խորհուրդը: Նա ուզում է հավատալ, թե մահից հետո այլև ոչինչ չկա. այդ դեպքում ի՞նչ իմաստ ունի նյութական, իրերով լի աշխարհը: Չէ՞ որ այդ դեպքում «մտածումն ու կենցաղը» հակասում են իրար: Ինտրան հավատում է ձևերի հավերժական փոխակերպումներին, էներգիայի՝ մի ձևից մյուսին անցնելուն: Այստեղից էլ բխում է մարդու՝ մահվանը հաջորդող հարության նկատմամբ հավատը, քանի որ վերածնունդը, անմահությունը, եթե անգամ պատրանք-երազանք է, իմացական ինչ-որ խորհուրդ է պարունակում, դրանում ինչ-որ իմաստավորված բան կա, մինչդեռ «իղեալե, անդրատենչութենե, Աստուծմե թափուր կյանքի պետքին մեջ՝ լոկ սկզբնական անասնություն մը, կույր, բիրտ, երանավետ» (էջ 157-158): «Երբ մտածման էությանն համեմատ կյանք մը չկա բնավ, կա՛մ պետք է անասնանալ կամ մեռնիլ» (էջ 158): Մարդը պետք է որ հարություն առնի, - պետք է հավատալ դրան, հակառակ դեպքում ինչպես դիմանալ «հորս մահվան չափազանց տառապեցնող» ահագնությանը, և ինչպես խուսափել այս ցավից, և ու՞ր փախչել հետապնդող այս ցավից:

Ինտրայի «Ներաշխարհի» ես-ը, քննելով մահվան ֆենոմենը, *գիտակցաբար, ոչ կույր հավատով, խոր բանականությամբ* մահվան գաղափարից փախուստի է դիմում դեպի անմահության հովիտ՝ Աստվածային անեզրություն: Քննվում է անմահություն-պատրանք-երազանք հարցը: Խնկի հոտը ծնում է զուգորդումներ՝ մահվան հոտ, մահը՝ նոր զուգորդում՝ բուրգերի և սֆինքսի առեղծվածը:

Դեռ «Ներաշխարհի» առաջին գլխի քննությունից էր երևում, որ ինքնասույզ ներհայեցողը «երկնելու», «ծնելու» է ճշմարիտ «ուղի», «դառ»,

«սամսար», «դուռ»: Մահվան և սիրո, մահվան և պատրանք-երազանքի, ցավի և հաճույքի հակադրամիասնությունը, որը մենք բնորոշում ենք որպես դիոնիսյան երկվեղկվածություն", Ինտրայի «Ներաշխարհ» արձակ պոեմի կամ ecce homo-ի կոնֆլիկտի առանցքն է, կոնֆլիկտ, որ «ծավալվում» է ներաշխարհում, այնուհետև վերաճում ինքնապատերազմի, ինքնամաքառման, իսկ հանգուցալուծումը հանգեցնում է հոգևոր «հարության»՝ արևի ծագման՝ հոգու խաղաղության, քանի որ հոգու երկունքն ավարտվում է ուղի, ճանապարհ, դուռ ծնելով՝ Քրիստոսի ծննդով՝ նոր բարոյականության կամ ապաքարոյապաշտության ծննդով: Ի՞նչ «դուռ» է բերում Ինտրան թանձր ցավից բխող ներքին տառապանքով:

«Ներաշխարհը» եզրափակող *վերջին երկու գլուխները* արևելյան հեշտության սիմվոլ «քաղաքի» կյանքի նկարագիր են (արևելյան հեշտանքը, ինչպես ամեն հաճույք, որի մասին խոսվում է «Ներաշխարհ»-ում, պետք է ընկալել որպես *հոգևոր* երևույթ. Ինտրայի խոսքը երբեք մարմնականի մասին չէ):

«Ներաշխարհի» ես-ը մահվան հովտից՝ բուրգերի հովտից, վերադառնում է «քաղաք». մահից վերադառնում է կյանք: Ես-ն ապրում է մահվան զգացողության փոխակերպումը հոգու առավոտի: Ինտրայի ես-ը ապրում է մահ-հոգու վերածնունդ վերադարձի խնդությունը: «Իռենա»-սեր խորհրդանիշը դառնում է միակ իրականությունը, ես-ը հոգու բակխանալիա է ապրում և ամբողջանում որպես «տարփավորի» կյանք վայելել երազող մեկը: Իռենան դառնում է երազանքի միակ առանցքը: Ներաշխարհում սկսում են վառվել սիրո հույսի, երազանքի, անուրջների «խնկագույն», «ալեգույն», «հոգիին գույն» լույսեր: Հոգին սիրո մեջ երազում է «անհագենալի՝ երջակնություն» և «անհագենալի ազատագրում»: Միրած էակի հոգու մեջ լուծվելու, նրան իր էությանը խառնելու, անսահման մեծ սիրո մեջ միավորվելու երազանքն արբեցնում է ես-ին, և նա ապրում է նույն տերյանական «ես էլ դու եմ, ես չկամ» հոգեբանական վիճակը: «Ներաշխարհի» ես-ը գիտե, որ սերը պատրանք է և հորինվում է սիրողի կողմից, որ այն *իր Ներաշխարհի բարձր զգայականության* արձագանքն է, բայց քա՜ղցր է անուրջը. «...կսիրեմ զքեզ իբրև թե մեռած ըլլայի». ես-ն իր բացառիկ հոգեկերտվածքով ընդունակ է բացառիկ՝ մահվանը համազոր սիրո: Այդպիսին են նրանք՝ վերուստ մենակյաց օրենսդիրները՝ առ մարդը անսահման սիրուց բխած հոգու ցավից գերհասունացածները, որոնք ունեն սիրելու մեծ կարողություն: Նրանք այն մարդիկ են, ովքեր կարող են այսպես սիրել. «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ., Իգ, 34):

Ինտրայի «Ներաշխարհը» հրաշալի վերջաբան ունի: Հանդես են գալիս նոր սիմվոլներ՝ *երեկո*, որ գլորվում է դեպի *գիշեր, լուսնագիշեր:* Նույն մեծարենցյան, նույն տերյանական լուսառատ գիշերը՝ սիրո երա-

զանքով, «երկնային քրոջ» պատկերով և ինտրայական «զուսնագիշերեն հիակերտված Կույս»-ով (191 էջ):

«Ներաշխարհի» ես-ի ինքնազննմամբ Ինտրան մարդկային հոգու և նրա ապրած հասարակության ներդաշնակությունը տեսնում է նոր բարոյականության՝ ապաբարոյապաշտության մեջ՝ ինքնարարման ուղին բռնած աստվածային լույսի մի հյուլե կազմող մարդու հոգուց բխող տիեզերական լույսով լեցուն կենսապաշտ առօրյայում: Մահվան ցավից գերհաստնացած, կյանքի իմաստը որոնող, սիմվոլիկ սոճիների մահ→ցավ→սեր→ կյանք, երկրային→երկնային, ես→Անեզր փոխանցումով մարդու ազատությունը տիեզերական անեզր սիրո մեջ որոնող հոգու երգ է Ինտրայի «Ներաշխարհը», մի երաժշտություն, որում «մարդը հանդես է գալիս բաց՝ ենթադրելով, թե մեղեդու պատճառով ոչ ոք չի տեսնի իրեն» (Ֆ. Նիցշե):

XIX դարավերջին և XX դարասկզբին հայ գրականության մեջ ծավալվող մահվան, սիրո, պատրանք-երազանքի թեման Ինտրայի «Ներաշխարհում» դրսևորված է բացառիկ գեղարվեստականությամբ:

Նախ հիշեցնենք, որ *ժանրային առումով այն չափազանց պատկերավոր էսսե է կամ արձակ բանաստեղծություններից հյուսված քնարական-փիլիսոփայական արձակ պոեմ: Հեղինակի տարածական մտածողությունն առարկայացել է գրական-գեղարվեստական խոշոր սիլոգիզմներով, մտքի ճկուն զուգորդումներից ծնվող պարադոքսալ պատկերներով: Գույների (սև, մոխրագույն, կապույտ, կանաչ, խնկագույն...)՝ թանձրից լուսառատը փոխակերպումների խաղը, էլիտար մեղեդայնությունը, որ շարադրանքը ձեռք է բերում՝ շաղախվելով հոգևոր երաժշտությամբ, աղոթքներով, տվյալ պահին կոնտեքստը գունավորող «հով», «փոթորիկ», «սոճիներ», «ծով», հոգու «գիշեր»... սիմվոլների ինքնաբուխ ներքին երաժշտականությունը, առատ այլաբանությունները, փոխաբերությունները և պատկերավորման զանազան այլ միջոցներն ամբողջության մեջ ձևավորում են բառակերտ խորիմաստ ճարտարապետական մի վեհ կոթող (ոչ գեղեցիկ, այլ վեհ)՝ մի բուրգ, որի խորքի լաբիրինթոսում ծփում է մահվան ցավից գերհաստնացած մարդկային մտքի գիտակցության հոսքը՝ իբրև փախուստ մահվան ոչնչից դեպի ինքնամաքրագործում, ինքնարարում: Այս Esse Homo–ն գեղարվեստական մեթոդի տեսանկյունից ևս մի նոր բարձր արժեք էր մեզանում՝ որպես սիմվոլիզմի («սիմվոլիզմը» բառի ամենախոր և ամենաուղիղ իմաստով՝ որպես գիլգամեշյան[12] մեթոդի մի մետամորֆոզ) այնպիսի դրսևորում, որն, իբրև հաստաբուն մի ծառ, տալիս է հզոր ճյուղեր, տերևներ, պտուղներ... այսինքն՝ սիմվոլիզմն իր դիվերգենցիաներով՝ էսթետիզմ, իմպրեսիոնիզմ, գիտակցության հոսք, ապաբարոյապաշտության գրականություն, «հեթանոսական» գրական շարժում, նեոռոմանտիզմ... Ինտրայի «Ներաշխարհին» բնորոշ է այս ամենն՝ ամբողջության մեջ. մահվան և սիրո, ցավի և հաճույքի դիոնիսյան երկփեղկվածությունը*

«Ներաշխարհի» սիմվոլիզմի առանցքն է, ստեղծագործության գունաեռաժշտական ակորդների հարմոնիան այն մոտեցնում է իմպրեսիոնիզմի, ներքին խոր դատողականությունը և ինտելեկտուալիզմը ձևավորում է գիտակցության հոսք, մարդու ինքնակերտումի՝ բարձր բարոյականության ուղին՝ որպես համամարդկային փրկության ուղի (ազգային նեղ սահմաններից վեր բարձրացող) ապաբարոյապաշտություն է, իսկ մարդու դաստիարակության նոր ուղին, «դատն», «սամսարը» գեղեցիկի մեջ տեսնելով՝ «Ներաշխարհը» ձեռք է բերում էսթետիզմին բնորոշ գծեր: Այս ամենով իսկ «Ներաշխարհը» ողջ բարմությամբ առանձնացավ XX դարասկզբի հայ գրականության պատմության մեջ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Չրաքյան Տ., Երկեր, Ե., 1981թ., էջ 9 (Ստ. Թոփչյանի առաջաբանը):

2. Հանգամանորեն տե՛ս Շոլինյան Մ., Լ. Շանթի «Հին աստվածներ» դրաման, Վանաձոր, 2002թ., էջ 56-61:

3. Տե՛ս Ницше Ф., Так говорил Заратустра. К генеалогии морали. Рождение трагедии. Воля к власти. Посмертные афоризмы. Минск, 2003, էջ 898 — 902 (Воля к власти):

4. Չրաքյան Տ., Երկեր, Ե., 1981թ., էջ 56 (այս գրքից հաջորդ մեջբերումների էջերը կտրվեն տեղում):

5. Ницше Ф., Утренняя заря. Переоценка всего ценного. Веселая наука, Минск,2003, էջ 15 (Утренняя заря).

6. Տե՛ս Юнг К., Психологические типы, Минск,1998, ïз 444:

7. Տե՛ս Շոլինյան Մ., Հանճար՝ ուղի, ճանապարհ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2002/2, էջ 126:

8. Ницше Ф., Утренняя заря , ïз 45:

9. Նույն տեղում, էջ 90:

10. Տե՛ս Пифагор, Золотой канон. Фигуры эзотерики. М., 2004, էջ 275:

11. Տե՛ս Շոլինյան Մ., Հեթանոսապաշտության արմատները և XX դարասկզբի հայ հեթանոսականությունը, «Նորք», 2005, թ.1, էջ 122-125:

12. Տե՛ս Մ. Շոլինյան «Մահ-պատրանք հակադրության գեղագիտությունը «Գիլգամեշ»-ում», «Գարուն», 2003/2, էջ 125-129: